

ՄԱԿ-ի կազմավորումը

Միավորված ազգերի կազմակերպությունը հիմնադրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945թ. հոկտեմբերի 24-ին: ՄԱԿ-ը ստեղծվել է 51 երկրների կողմից, որոնք պարտավորվել են միջազգային համագործակցության եւ համընդհանուր անվտանգության հաստատման միջոցով հասնել խաղաղության պահպանման: Այսօր ՄԱԿ-ը միավորում է 189 պետություն, որոնք կամովին միացել են դաշինքին:

Ստորագրելով եւ վավերացնելով ՄԱԿ-ի կանոնադրությունը՝ պետությունները հայտարարում են, որ կգործեն կանոնադրության շրջանակներում, կհետեւեն նրա սահմանափակումներին եւ օրենքներին, ինչպես նաեւ հավաստիացնում են, որ կկատարեն իրենց ստանձնած պարտավորությունները եւ կօժանդակեն միջազգային խաղաղության պահպանմանը:

Ի՞նչ է ՄԱԿ-ը

ՄԱԿ-ը ոչ թե համաշխարհային կառավարություն է, այլ միջազգային կազմակերպություն: ՄԱԿ-ը միջազգային

մի ֆորում է (հրապարակ), որտեղ աշխարհի տարբեր երկրներ, անգամ այնպիսիները, որոնք դիվանագիտական հարաբերություններ չունեն, հնարավորություն են ստանում մասնակցելու երկխոսություններին եւ լուծելու հրատապ խնդիրներ ու հակամարտություններ:

ՄԱԿ-ը միջնորդի դեր է ստանձնում այն դեպքերում, երբ երկրները չեն կարողանում համաձայնության գալ: Գնահատման, ադետային իրավիճակներում ՄԱԿ-ը ոչ միայն նյութական եւ հոգեւոր (մշակութային) օգնություն է ցույց տալիս երկրներին, այլեւ նպաստում է կոնֆլիկտների խաղաղ հանգուցալուծմանը:

ՄԱԿ-ի հիմնադրույթները եւ կանոնադրությունը

ՄԱԿ-ի հիմնական խնդիրներն են՝ ապահովել միջազգային անվտանգություն եւ խաղաղություն, զարգացնել պետությունների բարեկամական հարաբերությունները՝ հիմնված հավասար իրավունքների եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների վրա, նպաստել միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային եւ մարդասիրական խնդիրների լուծման նպատակով, աջակցել մարդու իրավունքների պաշտպանությանը եւ այլն:

ՄԱԿ-ի կանոնադրությունը ամբողջացնում է հետպատերազմյան ժամանակաշրջանի հիմնական սկզբունքներն ու

դիվանագիտական օրենքները: Կարգավորում է միջպետական բանակցությունների դաշտը եւ նպաստում համընդհանուր հարցերի լուծմանը: ՄԱԿ-ն այն միակ դիվանագիտական եւ բանակցային դաշինքն է, որին հաջողվել է էապես տարբեր երկրների միավորել մեկ հովանու տակ:

ՄԱԿ-ի խաղաղապահ մանդատը

ՄԱԿ-ի կապույտ սաղավարտներով խաղաղապահները հանուն խաղաղության ՄԱԿ-ի գործադրած ջանքերի ամենաակնառու խորհրդանիշն են: Կամավոր սկզբունքով ներգրավվելով տարբեր ազգային բանակներից՝ նրանք կատարում են անաչառ երրորդ կողմի դերը, ջանում են զինադադարի հասնել եւ պահպանել այն, ինչպես նաեւ բուֆերային գոտի են ձեւավորում հակամարտող կողմերի միջեւ: Նրանց ներկայությունը հնարավոր է դարձնում հակամարտության խաղաղ կարգավորմանն անհրաժեշտ դիվանագիտական ուղիներ որոնելու գործընթացը: Մինչ խաղաղապահները խաղաղություն են պահպանում տարածաշրջանում, ՄԱԿ-ի միջնորդները հանդիպում են հակամարտող կողմերի կամ երկրների ղեկավարների հետ եւ փորձում հասնել հարցի խաղաղ լուծմանը:

Մերօրյա խաղաղապահականությունը շատ ավելի մեծ ընդգրկում ունի, քան զուտ խաղաղության պահպանումը. ականների վնասագերծում, ճանապարհների ու կանուրջների վերականգնում,

ընտրությունների վերահսկման գործընթաց եւ պետության կողմից քաղաքացիների իրավունքների պաշտպանության հսկողություն:

1948թ. ի վեր 750 հազարանոց ռազմական ու քաղաքացիական ռստիկանությունը եւ հազարավոր քաղաքացիներ մասնակցել են մոտ 50 խաղաղապահ առաքելությունների, որոնց ընթացքում գոհվել են 1500 խաղաղապահներ:

ՄԱԿ-ի հիմնական մարմինները

Միավորված ազգերի կազմակերպությունը վեց հիմնական մարմին ունի՝ Գլխավոր ասամբլեա, Անվտանգության խորհուրդ, Տնտեսական ու սոցիալական խորհուրդ, Հոգաբարձուների խորհուրդ, Արդարադատության միջազգային դատարան եւ Քարտուղարություն: Դատարանի նստավայրը Հաագան է, իսկ մնացած բոլոր մարմինների գլխավոր նստավայրը Նյու Յորքի կենտրոնական գրասենյակն է:

Գլխավոր ասամբլեան

Գլխավոր ասամբլեան ստեղծվել է իբրեւ բանակցությունների ընդհանուր ֆորում, որտեղ բոլոր անդամ պետություններին տրվում են հավասար ընտրության իրավունքներ՝ «մեկ պետություն՝ մեկ ձայն» սկզբունքով: Կարելի է հարցերը, ինչպիսիք են միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը վերաբերող հանձնարարականները, նոր պետությունների անդամակցությունը, ՄԱԿ-ի միջոցառումներին հատկացվող

բյուջեն, որոշվում են ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

Գլխավոր ասամբլեայի գործունեությունն իրականացնում են վեց ֆունկցիոնալ կոմիտեներ.

1. Զինաթափման եւ միջազգային անվտանգության
2. Տնտեսական եւ ֆինանսական
3. Սոցիալական, մարդասիրական եւ մշակութային
4. Արտակարգ քաղաքականության եւ ապագադրությամբ
5. Վարչական եւ բյուջետային
6. Իրավական

Գլխավոր ասամբլեան գումարվում է տարին մեկ անգամ, արտակարգ իրավիճակների կապակցությամբ կարող է գումարվել նաեւ հատուկ կամ արտահերթ նիստ:

Անվտանգության խորհուրդ

Անվտանգության խորհրդի առաջնահերթ պարտականությունը միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանումն է: Այն ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների անունից որոշումներ կայացնելու լիազորություն ունի: Խաղաղությունը վերականգնելու նպատակով խորհուրդն իրավասու է խաղաղապահ զորքեր ուղարկել կոնֆլիկտային վայրեր կամ կիրառել տնտեսական պատժամիջոցներ եւ այլ գործողություններ:

Խորհուրդը 15 անդամ ունի, որոնցից հինգը՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Միացյալ Թագավորությունը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգները, մշտական անդամներ են, իսկ մնացած 10-ը երկու տարի ժամկետով, ըստ աշխարհագրական ներկայացուցչության, ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից: 2001թ. դրությամբ այդ երկրներն են՝ Բանգլադեշը, Կոլումբիան, Իռլանդիան, Ջամայկան, Մալին, Մավրիկոսը, Նորվեգիան, Մինգապուրը, Թունիսը, Ուկրաինան: Որոշումները պահանջում են 9 կողմ ձայն, որոնցից հինգը պետք է լինեն մշտական անդամ երկրների: Այս երկրներին «վետոյի» իրավունք է վերապահվում:

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդ

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը՝ բաղկացած 54 անդամ երկրներից, համակարգում է ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական ոլորտների ծրագրերը, մի շարք օժանդակ մարմինների, մասնագիտացված կազմակերպությունների, գործող եւ հինգ տարածաշրջանային հանձնաժողովների աշխատանքը:

Խորհուրդը հանձնարարություններ է տալիս եւ վերահսկում է զարգացող երկրների տնտեսական աճի խթանումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաեւ համաշխարհային աղքատության դեմ պայքարին ուղղված միջոցառումները:

Հոգաբարձուների խորհուրդ

ՄԱԿ-ի հոգաբարձուների խորհուրդն ստեղծվել է ապագադուրացման գործընթացին աջակցելու նպատակով: 1994թ. վերջերին գաղութների եւ կախյալ տարածքների անկախանալուց հետո այն պահպանում է իր ձեռնարկային գոյությունը: Զննարկվում է այս խորհրդին լրացուցիչ նոր մանդատ տալու հարցը:

Արդարադատության միջազգային դատարան

Արդարադատության միջազգային դատարանը ՄԱԿ-ի գլխավոր իրավական մարմինն է, որ կառավարվում է 15 երկրների դատավորների կողմից, հայտնի է նաեւ «Աշխարհի դատարան» անունով եւ կարգավորում է ոչ թե անհատների, այլ պետությունների իրավական վեճերը:

Քարտուղարություն

Քարտուղարությունը ղեկավարվում է գլխավոր քարտուղարի եւ միջազգային վարչական աշխատակազմի կողմից: Գլխավոր քարտուղարը, որն ընտրվում է 5 տարի ժամկետով, ղեկավարում է կազմակերպության աշխատանքը եւ պատասխանատու է ՄԱԿ-ի այլ մարմինների ընդունած որոշումների կատարման համար:

ԻՆՉ Է ՄԱԿ-Ի ՄՈՂԵԼԸ



ՄԱԿ-ի մոդելը նմանակում է իրական ՄԱԿ-ին: Ծրագրի մասնակիցներին առաջադրվում է մի երկիր, որը նրանք պետք է ներկայացնեն Գլխավոր ասամբլեայի կամ Անվտանգության խորհրդի պայմանական նստաշրջանում:

Այդ դերախաղերի ընթացքում մասնակիցները քննարկում են ընթացիկ համաշխարհային խնդիրներ, ինչպիսիք են, ասենք, մարդու իրավունքները, հանցագործությունների կանխումը, փախստականների հիմնախնդիրը, թմրադեղերի առևտուրը եւ տնտեսական զարգացումը:

Երբ սկսվում է ՄԱԿ-ի մոդելի դերախաղը, Դուք այլեւս ուսանող չեք, այլ որեւէ պետության դեսպան ՄԱԿ-ի համաժողովում: ՄԱԿ-ի մոդելի միջոցով դիվանագետների եւ պետական գործիչների ապագա սերունդը հնարավորություն է ստանում ծանոթանալու ոչ միայն առանձին երկրների, այլեւ համաշխարհային խնդիրներին, միջազգային քաղաքականության բարդություններին:

Այդ խաղերի ընթացքում հաջողության

հասնելու համար անհրաժեշտ է հմուտ դիվանագետ լինել, այսինքն՝ տիրապետել դիմացիին լսելու, համոզելու, ճիշտ պահին զիջելու կամ տեսակետը առաջ մղելու ունակությունների:

ՄԱԿ-ի մոդելի դերախաղերը մասնակցի մեջ սերմանում են օրինապահություն, բարեկիրթ վարվելակերպ, գաղափարների արդար մրցակցության մեջ համաձայնության հասնելու հմտություն: Դրանք ուսանողի մեջ նաեւ հանդուրժողականություն են կոնֆլիկտային իրավիճակները երկխոսության եւ փոխզիջումների միջոցով լուծելու ձգտում են առաջացնում:

Ի՞նչ է ՄԱԿ-ի մոդելի դերախաղը

ՄԱԿ-ի մոդելի դերախաղի համար կարող են հիմք դառնալ տարբեր համաժողովներ՝ կախված մասնակիցների թվից: Ինչպիսին էլ որ լինի նմանակման դերախաղը, Ձեր նպատակը պետք է լինի լավագույնս ներկայացնել ձեր երկրի շահերը: Այս պարագայում ամենակարեւորը պատրաստվածությունն է:

Հետազոտման ընթացքում ընտրված երկրի եւ համաժողովի թեմաների մասին ձեռք բերած գիտելիքները հնարավորություն կտան մասնակցելու բանավեճերին եւ պաշտպանելու տվյալ պետության շահերը: Ուստի հետազոտությունը անգնահատելի գործիք է:

ՄԱԿ-ի դերախաղերի ժամանակ ուսանողը բանախոսելու, զեկուցելու, ուսումնասիրություններ կատարելու եւ բանակցություններ վարելու հմտություններ

է ձեռք բերում: Դիվանագիտության, համաձայնության հասնելու, հակամարտությունների կարգավորման եւ հանդուրժողականության գաղափարները, որոնց մասնակիցներն առնչվում են դերախաղերի ընթացքում, կարող են օգտակար լինել հետագայում:

Հետազոտություն

ՄԱԿ-ի մոդելի պատվիրակի առաջնահերթ խնդիրներն են.

- հետազոտել տվյալ երկիրը՝ նկատի ունենալով հետեւյալները.

աշխարհագրական դիրքը՝ տարածաշրջանը, սահմանակից երկրները,

բնակչությունը՝ ազգությունը, էթնիկական խմբերը, լեզուն, կրոնը,

կառավարությունը՝ պետական կառուցվածքը, երկրի ղեկավարը,

տնտեսությունը՝ դրամաշրջանառությունը, ներմուծումը, արտահանումը, արտաքին առեւտրական կապերը,

արտասահմանյան կապերը՝ տարածաշրջանային կազմակերպությունները, դաշինքները, հակամարտությունները:

- ըմբռնել ՄԱԿ-ի համակարգը, կառուցվածքը, տվյալ համաժողովի պատմությունը եւ գործունեությունը,
- նախնական տեղեկություններ հավաքել առաջադրված թեմաների շուրջ,
- ծանոթանալ տվյալ երկրի ղեկավարության քաղաքական

- ելույթներին եւ ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչների, ինչպես նաեւ Գլխավոր քարտուղարի զեկույցներին,
- ուսումնասիրել այն բանաձեւերը, որոնց հեղինակն է տվյալ երկիրը,
 - վեր հանել եւ պահպանել երկրի քվեարկությունների օրինաչափությունը,
 - հետազոտել ՄԱԿ-ին երկրի մասնակցության պատմությունը,
 - ուսումնասիրել թեմային վերաբերող բոլոր բանաձեւերը, համաձայնագրերը, կանոնադրությունները, պայմանագրերը, հռչակագրերը եւ այլ փաստաթղթեր:

Եթե պատվիրակը ծանոթ չէ ՄԱԿ-ի համակարգին, ապա մեծ է հավանականությունը, որ նա շփոթվի դերախաղի ընթացքում եւ առաջարկի արդեն գոյություն ունեցող լուծումներ:

Ուստի առավել կարեւոր է ՄԱԿ-ի օժանդակ մարմինների, ծրագրերի եւ հիմնադրամների գործունեության, ձեռքբերումների, գործառույթների եւ տարբեր մեխանիզմների մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Հետազոտությունն անցկացնելիս կարող է պարզվել, որ տվյալ երկիրը քննարկվող թեմայի վերաբերյալ հստակ դիրքորոշում չունի: Այդ դեպքում հարկ կլինի քաղաքականություն մշակել՝ կախված այս կամ այն բլոկին տվյալ երկրի անդամակցությունից կամ տարածաշրջանի ընդհանուր քաղաքական ընթացքից:

ՄԱԿ-ի մոդելի դերախաղերում հարկ է ստեղծագործական մոտեցում ցուցաբերել

եւ դրսևորել այնպիսի դիրքորոշում, որը համապատասխանի տվյալ երկրի արտաքին քաղաքականությանը միջազգային ասպարեզում:

Եթե հետազոտության ընթացքում արդեն բավական տեղեկություններ են հավաքվել Ձեզ հանձնարարված երկրի մասին, հարկ է անցնել համաժողովում քննարկվող հարցերին: Մասնակցին մեծ առավելություն կտա երկրի եւ թեմայի մասին հետազոտությունների փոխկապակցումը:

Դիրքորոշման սեղմագրերի պատրաստումը

Հետազոտությունը անցկացնելուց հետո հարկ է պատրաստել 1-2 էջանոց հոդված, որը լավագույնս ներկայացնի պետության քաղաքականությունը միջազգային հարցերի առնչությամբ: Դիրքորոշման հոդվածները հաճախ կարող են հենց առաջին ելույթի հիմքը դառնալ: Այդ հոդվածի կառուցվածքը հետեւյալն է.

1. ներածություն՝ առաջադրված հիմնախնդիրներին տվյալ երկրի առնչության պատմությունը,
2. հիմնական մաս՝ հիմնախնդրի լուծման տվյալ երկրի քաղաքականության ներկայացումը, ինչպես նաեւ այդ քաղաքական գծի ընտրության մեկնաբանությունը,
3. ամփոփում:

Դիրքորոշման սեղմագիրը օգնում է պատվիրակին կազմակերպելու իր մտքերը, մշակելու բանակցությունների

ռազմավարությունը: Պատվիրակը պետք է նախօրոք հստակ բանակցային ռազմավարություն մշակի: Քանի որ օրակարգի բոլոր թեմաները հավասարապես հրատապ չեն տվյալ երկրի ազգային շահերի համար, պատվիրակը պետք է կենտրոնանա օրակարգի այն հարցերի վրա, որոնք առաջնահերթ են երկրի համար:

Թեև հետազոտությունը կարելի է նշանակություն ունի ՄԱԿ-ի մոդելի դերախաղերում, լույս իրազեկությունը դեռևս համաժողովում հաջողության հասնելու գրավական չէ: ՄԱԿ-ի մոդելի դիվանագետ դառնալու համար անհրաժեշտ են նաև այլ անձնական հատկանիշներ: Պատվիրակը պետք է ի վիճակի լինի կողմնորոշվելու տարբեր բարդ եւ անսպասելի իրավիճակներում:

ՄԱԿ-ի մոդելի դիվանագետ լինելը ենթադրում է.

- լիովին ըմբռնել երկրի դիրքորոշումը հարցի վերաբերյալ,
- սահմանել նպատակային խնդիրները,
- կողմնորոշվել, թե ստեղծված իրավիճակում ովքեր են համախոհները եւ ընդդիմախոսները,
- ըմբռնել գործընթացների տրամաբանությունը,
- հստակ շարադրել հայտարարությունը,
- հարգանքով վերաբերվել համաժողովի նախագահին եւ մնացած պատվիրակներին,

- գործարքների գնալ. բանակցությունները հաճախ փոխզիջումներ են պահանջում, սակայն հարկ է միշտ պաշտպանել սեփական դիրքորոշումն ու պայմանները եւ լինել ինքնավստահ,
- չթերագնահատել հակառակորդին:

Ռազմավարություններ եւ մարտավարություններ

Բանակցությունները արդյունավետ հունի մեջ դնելու համար կարելի է հետեւյալ մարտավարությունները.

- «ղեկավարեք» յուրաքանչյուր հանդիպում եւ առաջինը ներկայացրեք ձեր դիրքորոշումը,
- գործողությունների հստակ պլան ունեցեք,
- եղեք ճկուն դիվանագետ. փոքր փոխզիջումը հետագայում կարող է բանակցային մեծ հաջողություն բերել,
- բոլոր պայմանները քննարկելիս հստակ եղեք,
- դրսևորեք նախաձեռնություն Ձեր նպատակին հասնելու համար,
- հաճախ մասնակցեք խմբակցությունների քննարկումներին, երբ գտնում եք, որ դրանք կարող են Ձեզ օգտակար լինել,
- մի՞ մրցակցեք, այլ համագործակցեք:



Բանաձեւերի կազմումը

Բանաձեւերը ՄԱԿ-ում բանակցություններ վարելու եւ որոշումներ կայացնելու հիմնական գործիքն են: Բանաձեւերը բանակցությունների հիմնական նպատակն ու առիթն են: Այդ քննարկումների ընթացքում ներկայացուցիչները հնարավորություն են ստանում քննարկելու, լրամշակելու եւ մերժելու բանաձեւի այս կամ այն կետը: ՄԱԿ-ի մոդելում ակտիվ մասնակցելու համար խիստ անհրաժեշտ է բանաձեւեր գրելու ունակություն, քանզի դրանք են ՄԱԿ-ի գործունեության անցկացման հիմնական մեխանիզմները:

Բանաձեւերը բովանդակությամբ կարող են տարբեր կազմակերպությունների, ՄԱԿ-ի օժանդակ մարմիններին կամ անդամ պետություններին ուղղված հայտարարություններ կամ հրահանգներ լինել:

ՄԱԿ-ի մարմինների կողմից ընդունվող բանաձեւերը բնույթով տարբեր են: Դրանք հիմնականում հայտարարություններ ու առաջարկություններ են լինում կամ էլ՝ դատապարտումներ ու կոչեր: Ընդունվում

են նաեւ բանաձեւեր անդամ պետությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ:

Գլխավոր ասամբլեան եւ Տնտեսական ու սոցիալական խորհուրդը կարող են միայն հայտարարություններ անել կամ էլ որոշակի գործողություն առաջարկել: Անվտանգության խորհրդից բացի՝ ՄԱԿ-ի ոչ մի այլ մարմին իրավասու չէ անդամ երկրներից պատժամիջոցների կամ այլ միջոցների կիրառում պահանջել:

Բանաձեւի նախագիծ

Բանակցությունների եւ քննարկումների արդյունքում անդամ երկրները ներկայացնում են աշխատանքային փաստաթղթեր, որոնք արտացոլում են իրենց դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ: Որպեսզի աշխատանքային փաստաթուղթը դառնա բանաձեւի նախագիծ, անհրաժեշտ է, որ

- յուրաքանչյուր բանաձեւ մեկից երեք հովանավոր ունենա, այսինքն՝ հեղինակ հովանավոր դառնալիս անդամ երկիրը պետք է տվյալ բանաձեւի օգտին քվեարկի:
- բանաձեւը ստորագրվի առնվազն հինգ անդամ երկրների կողմից. ի դեպ, ստորագրող կողմը չի պարտավորվում քվեարկել բանաձեւի օգտին. յուրաքանչյուր երկիր իրավունք ունի մեկից ավելի աշխատանքային փաստաթուղթ ստորագրել:
- աշխատանքային փաստաթուղթը

վավերացվի նախագահի կողմից՝ դառնալով բանաձեւի նախագիծ:

Խորհուրդ է տրվում, որ պատվիրակները խորհրդակցեն եւ փորձեն, փոխզիջումների միջոցով ու համաձայնության գալով, մեկ ընդհանուր բանաձեւի մեջ ամփոփել տարբեր աշխատանքային փաստաթղթերի հողվածներ: Քննարկման կարող են դրվել մեկից ավելի բանաձեւեր՝ պայմանով, որ դրանք անդրադառնան խնդրի տարբեր մասերին կամ արտացոլեն տարբեր տեսակետեր:

Լրամշակումներ

Նախագահի կողմից վավերացվելուց հետո տվյալ բանաձեւի բոլոր լրացումներն ու կրճատումները կատարվում են լրամշակումների ձեւով:

Բանաձեւերի լրամշակումները լրացումներ, փոփոխություններ եւ կրճատումներ են մտցնում բանաձեւերի մեջ՝ դրանք հնարավորինս ընդունելի դարձնելով բոլոր ազգերի համար: Շատ հաճախ լրամշակումներն անխուսափելի են բանաձեւի շուրջ համաձայնության գալու համար:

Յուրաքանչյուր երկիր բանաձեւի լրամշակում առաջարկելու իրավունք ունի: Բանավեճի արդյունքում կարող են առաջանալ երկու տեսակի լրամշակումներ՝ ընդունելի եւ անընդունելի:

- Լրամշակումը համարվում է **ընդունելի**, եթե բանաձեւի հեղինակը հավանություն է տվել այդ լրամշակմանը: Այս դեպքում

լրացուցիչ քվեարկություն չի պահանջվում, եւ լրամշակումը մեխանիկորեն դառնում է բանաձեւի հավելյալ հոդված:

- Եթե բանաձեւի հեղինակը համաձայն չէ վավերացնելու առաջարկված լրամշակումը, այն դառնում է **անընդունելի**:

Անընդունելի լրամշակումը քվեարկության դնելու համար, բացի նախագահի վավերացումից, պահանջվում է նաեւ հինգ անդամ երկրների ստորագրություն: Այս ստորագրությունները ստանալուն պես երկուական պատվիրակ պետք է խոսեն հոգուտ եւ ընդդեմ լրամշակման վավերացման: Չայների մեծամասնությամբ այն համարվում է բանաձեւի նախագծի մաս եւ դրվում է քվեարկության:

Բանաձեւի հոդվածների առանձնացումը

Բանաձեւի հոդվածներն առանձնացվում են, որպեսզի ժողովը հնարավորություն ունենա քվեարկության դնելու նրա առանձին հոդվածները: Բանաձեւի մասնատման առաջարկը պետք է տրվի նախագահին անմիջապես քվեարկությունից առաջ:

Երկուական պատվիրակ պետք է խոսեն հոգուտ եւ ընդդեմ տվյալ առաջարկին: Եթե այն ընդունվում է, առանձնացված հոդվածները դառնում են առանձին բանաձեւի նախագիծ: Եթե նախագիծը չի ընդունվում, ապա սկզբնական բանաձեւից

հանվում են համապատասխան հոդվածները: Ընդունվելու դեպքում այդ հոդվածները համարվում են առանձին բանաձեւ:

Բանաձեւի ընդունում

Բացի Անվտանգության խորհրդից, ՄԱԿ-ի այլ մարմիններում բանաձեւի ընդունման համար պահանջվում է ձայների 3/4-ի մեծամասնություն: Անվտանգության խորհրդում պահանջվում է 9 կողմ ձայն, ներառյալ «վետոյի» իրավունք ունեցող 5 երկրների համաձայնությունը: Ընդ որում, այն դեպքում, երբ մշտական 5 անդամներից որեւէ մեկը ձեռնպահ է մնում, բանաձեւը ընդունվում է 9 կողմ ձայնի առկայության դեպքում:

Ի՞նչ կետեր պետք է հաշվի առնել բանաձեւեր գրելիս

Յուրաքանչյուր բանաձեւ մի երկար նախադասություն է, որը բաղկացած է տարբեր հատվածներից՝ ստորակետերով անջատված:

Բանաձեւը բաղկացած է երկու մասից՝ ներածական եւ հիմնական:

- **Ներածական** հոդվածները բանաձեւի հիմնական մասում առաջարկվող գործողությունների հիմնավորումն են:
- **Հիմնական** մասի հոդվածներում գետեղվում են բանաձեւի բուն բովանդակությունը եւ տվյալ խնդրի կարգավորմանն ուղղված գործողությունների ծրագիրը: Հիմնական

մասի յուրաքանչյուր հոդված պետք է սկսվի բայից: Հոդվածների հանրագումարը տրամաբանորեն շարադրված ուղենիշ է:

Որպեսզի ՄԱԿ-ի մոդելի բանաձևեր հնարավորինս նմանվի ՄԱԿ-ի իրական բանաձևի, դրա կառուցվածքն ու բովանդակությունը պետք է համապատասխանեցնել հետևյալ կետերին.

- ներածական հոդվածներում տալ խնդրո առարկայի համառոտ պատմությունը եւ ներկա իրավիճակի նկարագրությունը,
- հնարավորության դեպքում անդրադառնալ տվյալ թեմայի շուրջ ՄԱԿ-ի ձեռնարկած գործողություններին եւ ընդունած բանաձևերին,
- հիմնական հոդվածներում հայտարարությունների հետ մեկտեղ զետեղել տվյալ խնդրի լուծման համար գործողությունների նպաստավորության փաստարկումը,
- հնարավորության դեպքում հաշվի առնել նաեւ այդ հարցի շուրջ այլ երկրների դիրքորոշումները,
- բանաձևեր գրելիս առաջնորդվել ոչ միայն տվյալ երկրի շահերով, այլեւ խնդրին նայել «միջազգային» կամ «ՄԱԿ-ի» տեսանկյունից,
- բոլոր դեպքերում հաշվի առնել ՄԱԿ-ի նախկին բանաձևերը եւ առանց համապատասխան վկայակոչման

չկրկնել դրանք,

- խնդրի լուծմանն ուղղված նոր կոմիտեների, հանձնաժողովների եւ աշխատախմբերի ստեղծման առաջարկություն անելու դեպքում անպայման հաշվի առնել դրանց ֆինանսավորումը եւ նման մարմինների առկայությունը:



I Նստաշրջան

ՄԱԿ-ի մոդելի Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանը բաժանվում է երկու մասի՝ պաշտոնական եւ ոչ պաշտոնական բանավեճերի:

Պաշտոնական բանավեճի ժամանակ գործում են ընթացակարգի կանոնները: Այդ ժամանակ պատվիրակները կարող են ելույթ ունենալ, հայտարարություններ եւ առաջարկություններ անել, ներկայացնել եւ քննարկել բանաձեւերը:

Ոչ պաշտոնական բանավեճի ընթացքում պատվիրակները կարող են խորհրդակցել միմյանց կամ Գլխավոր քարտուղարի հետ: ՄԱԿ-ի մարմինների կատարած աշխատանքի մեծ մասը քննարկվում է ոչ պաշտոնական բանավեճի ժամանակ:

Կանոն 1.

Ոչ անդամ երկրների մասնակցությունը

Անվտանգության խորհուրդը, իր 15 անդամներից բացի, ըստ իր հայեցողության, կարող է նաեւ այլ երկրների հրավիրել, որոնք հետաքրքրված

են քննարկվող հարցերով:

Այդ երկրներն իրավասու են մասնակցելու քննարկումներին եւ Անվտանգության խորհրդի աշխատանքին, բայց քվեարկելու եւ բանաձեւեր ներկայացնելու իրավունք չունեն:

Նրանք կարող են բանաձեւ նախագծել այն դեպքում, եթե այն հովանավորի անդամ երկրներից որեւէ մեկը:

Կանոն 2.

Նստաշրջանի բացումը

Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի յուրաքանչյուր նստաշրջան սկսվում է երկրների բարձրաձայն քվարկումով: Ընդ որում քվարկման ժամանակ անդամ պետությունները պետք է իրենց կամ ներկա ու քվեարկող, կամ էլ ներկա հայտարարեն:

Առաջին դեպքում պատվիրակները պետք է միայն կողմ կամ դեմ քվեարկեն, իսկ երկրորդ դեպքում իրավունք ունեն նաեւ ձեռնպահ մնալ:

Սակայն երկու դեպքում էլ պատվիրակները չեն կարող ձեռնպահ մնալ ընթացակարգին վերաբերող հարցերում:

Կանոն 3.

Քվորում

Անվտանգության խորհրդի քվորումն ապահովվում է ինը ներկա երկրների առկայությամբ: Գլխավոր ասամբլեայում քվեարկության համար պահանջվում է անդամ երկրների մեծամասնության

ներկայությունը:

Կանոն 4.

Այն անդամ երկրները, որոնք ներկա չեն լինում քվարկման ժամանակ, քվեարկելու իրավունք չեն ստանում, քանի դեռ նախագահին չեն հայտնում իրենց ներկայության մասին:

Կանոն 5.

Օրակարգի հաստատում

Համաժողովի անդամները Քարտուղարության կողմից նախօրոք առաջարկված ցանկից ընտրում են օրակարգի թեմաները:

Օրակարգի հաստատման քննարկումները սահմանափակվում են մեկական պատվիրակի՝ ընդդեմ եւ հօգուտ օրակարգի ելույթով: Այն հաստատելու համար պահանջվում է ձայների մեծամասնություն:

Կանոն 6.

Բանախոսների ցուցակ

Նախագահը դիմում է պատվիրակներին՝ գրանցվելու բանախոսների ցուցակում, այդպիսով նրանք հաստատում են իրենց ելույթները: Պատվիրակները սկսում են գրանցվել՝ բարձրացնելով իրենց պետությունների անվանաթերթիկները: Ընթացքում նշվում է նաեւ հերթականությունը:

Կանոն 7.

Նախագահը իրավասու է սահմանափակելու ելույթին

հատկացված ժամանակը: Սովորաբար այն 2-5 րոպե է:

II Պատվիրակի իրավունքներ

Կանոն 8.

Կանոնակարգի խախտում

Յուրաքանչյուր պատվիրակ իր ելույթի ժամանակից դուրս ընթացակարգին վերաբերող որևէ խախտման մասին հայտարարելու իրավունք ունի: Դա կարող է վերաբերել քննարկումներին կամ ժողովի կարգուկանոնի պահպանման հարցերին:

Խախտման մասին հայտարարությունները պետք է թույլատրվեն նախագահի կողմից:

Կանոն 9.

Խնդրանք իրազեկ պահելու մասին

Այս խնդրանքը սովորաբար արվում է ժողովի նյութերի կամ փաստաթղթերի վերաբերյալ բացատրություններ, ինչպես նաև ելույթ ունեցող պատվիրակից պարզաբանումներ ստանալու նպատակով:

Պատվիրակները այս իրավունքը կարող են օգտագործել միայն ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ:

Կանոն 10.

Պատասխանի իրավունք

Այս իրավունքը պատվիրակներին տրվում է նախագահի կողմից, որպեսզի նրանք հնարավորություն ստանան մեկնաբանելու բանախոսի ելույթում կամ որևէ բանաձեռում առկա իրենց երկրին վերաբերող հարցերը:

III Ընթացակարգին վերաբերող առաջարկներ

Այս առաջարկների վերաբերյալ որոշումները կայացվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Պատվիրակներն այս դեպքում ձեռնպահ մնալու իրավունք չունեն:

Կանոն 11.

Բանախոսների ցուցակի եզրափակում

Քննարկումների ընթացքում համաժողովը կարող է քվեարկել բանախոսների ցուցակը եզրափակելու օգտին, որի համար պահանջվում է ձայների պարզ մեծամասնություն: Փակելով բանախոսների ցուցակը՝ ժողովն անցնում է ոչ պաշտոնական բանավեճի:

Կանոն 12.

Պաշտոնական բանավեճ

Այս բանավեճի ընթացքում պատվիրակին իրավունք է վերապահվում հանդես գալու միայն ելույթով:

Կանոն 13.

Ոչ պաշտոնական բանավեճ

Չայների մեծամասնությամբ համաժողովը կարող է ոչ պաշտոնական բանավեճի անցնել: Այդ ժամանակ պատվիրակները հայտարարություններ անելու, քննարկումներին մասնակցելու եւ տեղեկանալու խնդրանքով ելույթ ունեցողներին դիմելու իրավունք են ստանում:

Ոչ պաշտոնական բանավեճի ընթացքում

հիմնական հարցերի վերաբերյալ քվեարկություն չի թույլատրվում:

Կանոն 14.

Բանավեճի պաշտոնական ավարտ

Սա նշանակում է, որ ժողովն ավարտում է օրակարգի՝ տվյալ թեմայի բանավեճը՝ առանց որեւէ բանաձեռի ընդունման եւ անցնում է օրակարգի հաջորդ թեմային:

Բանավեճը պաշտոնապես ավարտելու համար պետք է թեր եւ դեմ առաջարկով ելույթ ունենան երկուսական պատվիրակներ:

Կանոն 15.

Բանավեճի դադարեցում

Պատվիրակներից մեկը կարող է բանավեճը դադարեցնելու եւ անմիջապես քվեարկության անցնելու առաջարկություն անել արդեն ներկայացված բանաձեռերի նախագծերի շուրջ: Որպեսզի առաջարկը դրվի ընդհանուր քվեարկության, երկու պատվիրակներ պետք է ելույթ ունենան բանավեճի դադարեցման դեմ: Հակառակ դեպքում ժողովն անմիջապես դադարեցնում է քննարկումները:

Կանոն 16.

Ժողովի կասեցում

Ժողովը կասեցվում է նախագահի կողմից սահմանված ժամանակահատվածով:

Կանոն 17.

Խորհրդակցություն

Խորհրդակցությունը լինում է

պաշտոնական եւ ոչ պաշտոնական:

Միջնորդված խորհրդակցության ժամանակ բանախոսների ցուցակը չի գործում: Պատվիրակները ելույթ ունենալու ցանկություն են հայտնում, եւ նախագահը այն ընդունելուց հետո նրանց ձայն է տալիս:

Ազատ խորհրդակցության ժամանակ պատվիրակներն ազատ խորհրդակցելու իրավունք են ստանում՝ առանց նախագահի միջամտության: Խորհրդակցությանը հատկացված ժամանակահատվածի ընթացքում նրանք նույնիսկ կարող են լքել դահլիճը:

Կանոն 18.

Ընթացակարգին վերաբերող առաջարկների առաջնահերթությունը

- ժողովի կասեցում
- բանավեճի պաշտոնական ավարտ
- բանավեճի դադարեցում

Կանոն 19.

Ներկայացված բանաձեռեր

Առաջարկված բանաձեռերը գրավոր տեսքով հանձնվում են նախագահին՝ անդամ երկրների համապատասխան բանակի ստորագրություններով: Գլխավոր ասամբլեայում կամ Անվտանգության խորհրդում քննարկվելուց առաջ բանաձեռ պետք է արժանանա նախագահի հավանությանը:

Նախագահի ստորագրությունը ստանալու դեպքում բանաձեռ պետք է հեղինակի կողմից ներկայացվի պաշտոնական քննարկման ժամանակ:

Կանոն 20.

Ներկայացված լրամշակումներ

Լրամշակման ընդունման գործընթացը նման է բանաձեռի ընդունման գործընթացին:

Ընդունելի լրամշակումները մեխանիկորեն դառնում են բանաձեռի հավելյալ հոդված: Անընդունելի լրամշակումները բանաձեռի նախագիծ դառնալու համար պահանջում են ձայների մեծամասնություն:

Կանոն 21.

Բանաձեռի վերանայում

Բանաձեռի շուրջ քվեարկությունից հետո, անկախ ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքից, անդամ երկրները վերանայելու իրավունք են ստանում:

Այս առաջարկության օգտին եւ դեմ պետք է մեկական պատվիրակ ելույթ ունենա: Պահանջվում է ձայների պարզ մեծամասնություն:

Կանոն 22.

Բանաձեռի կամ առաջարկի հետ վերցնելը

Որպեսզի որեւէ բանաձեռ կամ առաջարկ հետ վերցվի, նրա հովանավորը պետք է դադարեցնի իր օժանդակությունը:

Բանաձեռ կարող է բանավեճից հետ վերցվել քվեարկությունը սկսվելուց առաջ, այն պայմանով, որ այն որեւէ փոփոխությունների չի ենթարկվել: Մակայն բանավեճից հետ վերցված բանաձեռ կամ առաջարկը կարող է վերաներկայացվել մեկ ուրիշ պատվիրակի կողմից:

IV Քվեարկություն

Կանոն 23.

Յուրաքանչյուր անդամ երկիր ունի մեկ ձայնի իրավունք:

Կանոն 24.

Քվեարկության կարգը Անվտանգության խորհրդում

ա. Ընթացակարգին վերաբերող հարցեր

Այս հարցերի վերաբերյալ որոշումները կայացվում են կողմ ձայների մեծամասնությամբ: Պատվիրակները այս դեպքում ձեռնպահ մնալու իրավունք չունեն:

բ. Հիմնական հարցեր

Այս հարցերի վերաբերյալ որոշումները կայացնելու համար պահանջվում է 9 կողմ ձայն, ներառյալ հինգ մշտական անդամ երկրների ձայները: Այս դեպքում ձեռնպահ մնալը կամ քվեարկությունից բացակայելը «վետո» չի համարվում:

Կանոն 25.

Գլխավոր ասամբլեայում քվեարկության կարգը

ա. «Կարեւոր» հարցերը վերաբերում են միջազգային անվտանգությանը եւ խաղաղությանը, անդամ երկրներին իրավունքներից եւ արտոնություններից զրկելուն, նոր երկրների անդամակցությանը, անդամ երկրների վտարմանը եւ բյուջեի հարցերին: Նման հարցերի ընդունման համար պահանջվում է ձայների 2/3-ի մեծամասնություն:

բ. Մնացած հարցերի ընդունման համար պահանջվում է ձայների պարզ մեծամասնություն:

Կանոն 26.

Քվեարկության կարգը

Սովորաբար այս ժողովների ընթացքում պատվիրակները քվեարկում են՝ բարձրացնելով իրենց պետության անվան թերթիկները:

Սակայն պատվիրակներից մեկի առաջարկությամբ կարող է անցկացվել անվանական քվեարկություն: Դա կատարվում է այբբենական կարգով: Անդամ երկրի անունը հնչելուն պես նրա պատվիրակը պետք է պատասխանի «այո», «ոչ» կամ «ձեռնպահ»:

Կանոն 27.

Բացատրության իրավունք

Քվեարկությունից հետո նախագահը կարող է պատվիրակներին իրենց որոշումը բացատրելու իրավունք տալ: Բացատրության համար նախատեսված ժամանակը կարող է սահմանափակվել նախագահի կողմից:

Սա բնավ չի ենթադրում քննարկումների հետագա շարունակություն: Ձեռնպահ քվեարկածներին այս իրավունքը չի տրվում:

Կանոն 28.

Քվեարկության հերթականությունը

Քվեարկությունը պետք է անցկացվի հետևյալ հերթականությամբ.

- բանաձեռի լրամշակումներ,

- հողվածների առանձնացում,

-առաջին հերթին պետք է քվեարկությամբ որոշել՝ արդյո՞ք առանձնացնել բանաձեռից տվյալ հողվածները, թե ոչ,

-երկրորդ՝ պետք է առանձնացված հողվածի կամ հողվածների ընդունման կողմ կամ դեմ քվեարկել:

- արդեն ուղղված եւ մասնատված բանաձեռի ընդունման քվեարկություն:

V Նախագահի լիազորությունները

Կանոն 29.

Ընթացակարգի այն հարցերը, որոնք հիշատակված չեն այս կանոններում, թողնվում են նախագահի հայեցողությանը:



1. UN System Chart
ՄԱԿ-ի համակարգի սխեման
(տես ներդիրը)

2. List of UN Member States
ՄԱԿ-ի անդամ պետությունները*
 (ըստ 2000թ. դեկտեմբերի 18-ի տվյալների)

ԱՄԻԱ

Արաբական Միացյալ Էմիրություններ
 (9 դեկտեմբերի, 1971)

Աֆղանստան (19 նոյեմբերի, 1946)

Բահրեյն (21 սեպտեմբերի, 1971)

Բանգլադեշ (17 սեպտեմբերի, 1974)

Բրունեյ-Դարուսսալամ (21 սեպտեմբերի, 1984)

Բութան (21 սեպտեմբերի, 1971)

Եմեն (30 սեպտեմբերի, 1947)

Թաիլանդ (16 դեկտեմբերի, 1946)

Թուրքմենստան (2 մարտի, 1992)

Ինդոնեզիա (28 սեպտեմբերի, 1950)

* Երկրների ըստ մայր ցամաքների բաշխումը կատարված է քաղաքական սկզբունքով:

Իսրայել (11 մայիսի, 1949)
Իրանի Իսլամական Հանրապետություն
 (24 հոկտեմբերի, 1945)
Իրաք (21 դեկտեմբերի, 1945)
**Լատսի Ժողովրդադեմոկրատական
 Հանրապետություն** (14 դեկտեմբերի,
 1955)
Լիբանան (24 հոկտեմբերի, 1945)
Կամբոջա (14 դեկտեմբերի, 1955)
Կատար (21 սեպտեմբերի, 1971)
Կիպրոս (20 սեպտեմբերի, 1960)
Կորեայի Հանրապետություն
 (17 սեպտեմբերի, 1991)
**Կորեայի ժողովրդադեմոկրատական
 Հանրապետություն** (17 սեպտեմբերի,
 1991)
Հնդկաստան (30 հոկտեմբերի, 1945)
Հորդանան (14 դեկտեմբերի, 1955)
Ղազախստան (2 մարտի, 1992)
Ղրղզստան (2 մարտի, 1992)
Ճապոնիա (18 դեկտեմբերի, 1956)
Մալայզիա (17 սեպտեմբերի, 1957)
Մյանմար (19 ապրիլի, 1948)
Մոնղոլիա (27 հոկտեմբերի, 1961)
Նեպալ (14 դեկտեմբերի, 1955)
Շրի Լանկա (14 դեկտեմբերի, 1955)
Չինաստան (24 հոկտեմբերի, 1945)
Պակիստան (30 սեպտեմբերի, 1947)
Սաուդյան Արաբիա (24 հոկտեմբերի, 1945)
Մինգապուր (21 սեպտեմբերի, 1965)
Սիրիայի Արաբական Հանրապետություն
 (24 հոկտեմբերի, 1945)
Վիետնամ (20 սեպտեմբերի, 1977)

Տաջիկստան (2 մարտի, 1992)
Ուզբեկստան (2 մարտի, 1992)
Քուվեյթ (14 մայիսի, 1963)
Օման (7 հոկտեմբերի, 1971)
Ֆիլիպիններ (24 հոկտեմբերի, 1945)

ԱՖՐԻԿԱ

Ալժիր (8 հոկտեմբերի, 1962)
Անգոլա (1 դեկտեմբերի, 1976)
Բենին (20 սեպտեմբերի, 1960)
Բոտսվանա (17 հոկտեմբերի, 1966)
Բուրկինա Ֆասո (20 սեպտեմբերի, 1960)
Բուրունդի (18 սեպտեմբերի, 1962)
Գաբոն (20 սեպտեմբերի, 1960)
Գամբիա (21 սեպտեմբերի, 1965)
Գանա (8 մարտի, 1957)
Գվինեա (12 դեկտեմբերի, 1958)
Գվինեա-Բիսաու (17 սեպտեմբերի, 1974)
Եգիպտոս (24 հոկտեմբերի, 1945)
Եթովպիա (13 նոյեմբերի, 1945)
Չամբիա (1 դեկտեմբերի, 1964)
Չինբարվե (25 օգոստոսի, 1980)
Էկվատորիալ Գվինեա (12 նոյեմբերի, 1968)
Էրիթրեա (28 մայիսի, 1993)
Թունիս (12 նոյեմբերի, 1956)
Լեսոտո (17 հոկտեմբերի 1966)
Լիբերիա (2 նոյեմբերի 1945)
Լիբիայի Արաբական Չամահիրիա
 (14 դեկտեմբերի, 1955)
Կամերուն (20 սեպտեմբերի, 1960)
Կարո Վերդե (16 սեպտեմբերի, 1975)
**Կենտրոնական Աֆրիկյան
 Հանրապետություն** (20 սեպտեմբերի, 1960)

Կոմորյան Կղզիներ (12 նոյեմբերի, 1975)
Կոնգո (20 սեպտեմբերի, 1960)
Կոնգոյի Ժողովրդական Հանրապետություն
 (20 սեպտեմբերի, 1960)
Կոտ Դիվուար (20 սեպտեմբերի, 1960)
Հարավային Աֆրիկա (7 նոյեմբերի, 1945)
Մադագասկար (20 սեպտեմբերի, 1960)
Մալավի (1 դեկտեմբերի, 1964)
Մալդիվներ (21 սեպտեմբերի, 1965)
Մալի (28 սեպտեմբերի, 1960)
Մավրիկոս (24 ապրիլի, 1968)
Մավրիտանիա (7 հոկտեմբերի, 1961)
Մարոկկո (12 նոյեմբերի, 1956)
Մոզամբիկ (16 սեպտեմբերի, 1975)
Նամիբիա (23 ապրիլի, 1990)
Նիգեր (20 սեպտեմբերի, 1960)
Նիգերիա (7 հոկտեմբերի, 1960)
Չադ (20 սեպտեմբերի 1960)
Ջիբութի (20 սեպտեմբերի 1977)
Ռուանդա (18 սեպտեմբերի 1962)
Սան Տոմե եւ Պրինսիպի (16 սեպտեմբերի,
 1975)
Մեյձելյան Կղզիներ (21 սեպտեմբերի, 1976)
Մենեզալ (28 սեպտեմբերի, 1960)
Միեռա Լեոնե (27 սեպտեմբերի, 1961)
Մոմալի (20 սեպտեմբերի, 1960)
Սվազիլենդ (24 սեպտեմբերի 1968)
Սուդան (12 նոյեմբերի, 1956)
**Տանզանիայի Միավորված
 Հանրապետություն** (14 դեկտեմբերի, 1961)
Տոգո (20 սեպտեմբերի, 1960)
Ուգանդա (25 հոկտեմբերի, 1962)
Քենիա (16 դեկտեմբերի, 1963)

ԵՎՐՈՊԱ

Ադրբեջան (9 մարտի, 1992)
Ալբանիա (14 դեկտեմբերի, 1955)
Անդորրա (28 հուլիսի, 1993)
Ավստրիա (14 դեկտեմբերի, 1955)
Բելառուս (24 հոկտեմբերի, 1945)
Բելգիա (27 դեկտեմբերի, 1945)
Բոսնիա եւ Հերցեգովինա (22 մայիսի, 1992)
Բուլղարիա (14 դեկտեմբերի, 1995)
Գերմանիա (18 սեպտեմբերի, 1973)
Դանիա (24 հոկտեմբերի, 1945)
Էստոնիա (17 սեպտեմբերի, 1991)
Թուրքիա (24 հոկտեմբերի, 1945)
Իռլանդիա (14 դեկտեմբերի, 1955)
Իսլանդիա (19 նոյեմբերի, 1946)
Իսպանիա (14 դեկտեմբերի, 1955)
Իտալիա (14 դեկտեմբերի, 1955)
Լատվիա (17 սեպտեմբերի, 1991)
Լեհաստան (24 հոկտեմբերի, 1945)
Լիխտենշտեյն (18 սեպտեմբերի, 1990)
Լիտվա (17 սեպտեմբերի, 1991)
Լյուքսեմբուրգ (24 հոկտեմբերի, 1945)
Խորվաթիա (22 մայիսի, 1992)
Հայաստան (2 մարտի, 1992)
Հարավսլավիա (24 հոկտեմբերի, 1945)
Հունաստան (25 հոկտեմբերի, 1945)
Հունգարիա (14 դեկտեմբերի, 1955)
Մալթա (1 դեկտեմբերի, 1964)
**Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի
 Հանրապետություն** (8 ապրիլի, 1993)
Միացյալ Թագավորություն (24 հոկտեմբերի,
 1945)

հավելված

Մոլդովայի Հանրապետություն (2 մարտի, 1992)
 Մոնակո (28 մայիսի, 1993)
 Նիդեռլանդներ (10 դեկտեմբերի, 1945)
 Նորվեգիա (27 նոյեմբերի, 1945)
 Շվեդիա (19 նոյեմբերի, 1946)
 Չեխիայի Հանրապետություն (19 հունվարի, 1993)
 Պորտուգալիա (14 դեկտեմբերի, 1955)
 Ռումինիա (14 դեկտեմբերի, 1955)
 Ռուսաստանի Դաշնություն (24 հոկտեմբերի, 1945)
 Սան Մարինո (2 մարտի, 1992)
 Սլովակիա (19 հունվարի, 1993)
 Սլովենիա (22 մայիսի, 1992)
 Վրաստան (31 հուլիսի, 1992)
 Ուկրաինա (24 հոկտեմբերի, 1945)
 Ֆինլանդիա (14 դեկտեմբերի, 1955)
 Ֆրանսիա (24 հոկտեմբերի, 1945)

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (24 հոկտեմբերի, 1945)
 Անտիգուա եւ Բարբուդա (11 նոյեմբերի, 1981)
 Արգենտինա (24 հոկտեմբերի, 1945)
 Բահամյան Կղզիներ (18 սեպտեմբերի, 1973)
 Բարբադոս (9 դեկտեմբերի, 1966)
 Բելիզ (25 սեպտեմբերի, 1981)
 Բոլիվիա (14 նոյեմբերի, 1945)
 Բրազիլիա (24 հոկտեմբերի, 1945)
 Գայանա (20 սեպտեմբերի, 1966)
 Գվատեմալա (21 նոյեմբերի, 1945)

Գրենադա (17 սեպտեմբերի, 1974)
 Դոմինիկա (18 սեպտեմբերի, 1978)
 Դոմինիկայի Հանրապետություն (24 հոկտեմբերի, 1945)
 Էկվադոր (21 դեկտեմբերի, 1945)
 Կանադա (9 նոյեմբերի, 1945)
 Կոլումբիա (5 նոյեմբերի, 1945)
 Կոստա Ռիկա (2 նոյեմբերի, 1945)
 Կուբա (24 հոկտեմբերի, 1945)
 Հայիթի (24 հոկտեմբերի, 1945)
 Հոնդուրաս (17 դեկտեմբերի, 1945)
 Մեքսիկա (7 նոյեմբերի 1945)
 Նիկարագուա (24 հոկտեմբերի, 1945)
 Չիլի (24 հոկտեմբերի, 1945)
 Պանամա (13 նոյեմբերի, 1945)
 Պարագվայ (24 հոկտեմբերի, 1945)
 Պերու (31 հոկտեմբերի, 1945)
 Ջամայկա (18 սեպտեմբերի, 1962)
 Սալվադոր (24 հոկտեմբերի, 1945)
 Մենթ Լյուսիա (18 սեպտեմբերի, 1979)
 Մենթ Վինսենթ եւ Գրենադիներ (16 սեպտեմբերի, 1980)
 Մենթ Զիբու եւ Նեվիս (23 սեպտեմբերի, 1983)
 Սուրինամ (4 դեկտեմբերի, 1975)
 Վենեսուելա (15 նոյեմբերի, 1945)
 Տրինիդադ եւ Տոբագո (18 սեպտեմբերի, 1962)
 Ուրուգվայ (18 դեկտեմբերի, 1945)

ԱՎԱՏՐԱԼԻԱ

Ավստրալիա (1 նոյեմբերի 1945)
 Կիրիբատ (14 սեպտեմբերի 1999)

- Մարշալյան Կղզիներ** (17 սեպտեմբերի 1991)
- Միկրոնեզիայի Դաշնակցային Նահանգներ**
(17 սեպտեմբերի, 1991)
- Նաուրու** (14 սեպտեմբերի, 1999)
- Նոր Զելանդիա** (24 հոկտեմբերի, 1945)
- Պալաու** (15 դեկտեմբերի, 1994)
- Պապուա-Նոր Գվինեա** (10 հոկտեմբերի,
1975)
- Սամոա** (15 դեկտեմբերի, 1976)
- Սողոմոնի Կղզիներ** (19 սեպտեմբերի, 1978)
- Վանուատու** (15 սեպտեմբերի, 1981)
- Տոնգա** (14 սեպտեմբերի, 1999)
- Տուվալու** (5 սեպտեմբերի, 2000)
- Ֆիջի** (13 հոկտեմբերի, 1970)

3. Ongoing Peacekeeping Operations

ՄԱԿ-ի ընթացիկ խաղաղապահ գործողությունները
2001թ. սեպտեմբերի 15-ի տվյալներով

Անձնակազմ

Առաքելություններում ընդգրկված զինվորականներ եւ քաղաքացիական ուստիկանություն47,151
 Զինվորականներով եւ քաղաքացիական ուստիկանությամբ խաղաղապահ գործողությունները օժանդակող անդամ պետություններ..... 88
 Միջազգային քաղաքացիական անձնակազմ..... 4,253
 Տեղական քաղաքացիական անձնակազմ..... 8,489
 Խաղաղապահների զոհերի թիվը 1948-2001թթ. մայիսի 31..... 1,680

Ֆինանսավորում

2001թ. հուլիսի 1-ից մինչեւ 2002թ. հուլիսի 30-ը անհրաժեշտ է.....մոտ 3 մլրդ ԱՄՆ դոլար
 1948թ. մինչեւ 2001թ. հունիսի 31-ը ծախսվել էմոտ 23.3 մլրդ ԱՄՆ դոլար
 Ոչ պետական կառույցների ներդրումը խաղաղապահ գործողություններում 2001թ. օգոստոսի 31-ի դրությամբմոտ 3.4 մլրդ ԱՄՆ դոլար

Խաղաղապահ

Ասիայում

UNMOGIP

United Nations Military Observer Group in India and Pakistan

Միավորված ազգերի զինվորական դիտորդական խումբը Հնդկաստանում եւ Պակիստանում

Գործում է սկսած 1949թ. հունվարից:

UNTAET

United Nations Transitional Administration in East Timor

Միավորված ազգերի անցումային կառավարումը Արեւելյան Թիմորում

Գործում է սկսած 1999թ. հոկտեմբերից:

Եվրոպայում

UNFICYP

United Nations Peacekeeping Force in Cyprus
Միավորված ազգերի խաղաղապահ ուժերը Կիպրոսում

Գործում են սկսած 1964 թ. մարտից:

UNMIBH

United Nations Mission in Bosnia and Herzegovina

Միավորված ազգերի առաքելությունը Բոսնիայում եւ Հերցեգովինայում

Գործում է սկսած 1995թ. դեկտեմբերից:

UNMIK

United Nations Interim Administration Mission in Kosovo

Միավորված ազգերի ժամանակավոր

կառավարման առաքելությունը Կոսովոյում
Գործում է սկսած 1999 թ. հունիսից:

UNMOP

United Nations Mission of Observers in Prevlaka

Միավորված ազգերի դիտորդական առաքելությունը Պրեվլակայում

Գործում է սկսած 1996թ. հունվարից:

UNOMIG

United Nations Observer Mission in Georgia

Միավորված ազգերի դիտորդական առաքելությունը Վրաստանում

Գործում է սկսած 1993թ. օգոստոսից:

Մերձավոր Արևելքում

UNDOF

United Nations Disengagement Observer Force

Միավորված ազգերի անջատման դիտորդական ուժերը Լիբանանում

Գործում են սկսած 1974թ. հունիսից:

UNIFIL

United Nations Interim Force in Lebanon

Միավորված ազգերի ժամանակավոր ուժերը Լիբանանում

Գործում է սկսած 1978թ. մարտից:

UNIKOM

United Nations Iraq-Kuwait Observation Mission

Միավորված ազգերի դիտորդական առաքելությունը Իրաքում եւ Քուվեյթում

Գործում են սկսած 1991թ. ապրիլից:

UNTSO

United Nations Truce Supervision Organization

Միավորված ազգերի զինադադարին
օժանդակող կազմակերպություն (Միջին
Արևելքում)

Գործում է սկսած 1948թ. հունիսից:

4. Sample Resolution

Բանաձեռի նմուշ

Հանձնաժողով՝ Թեմա՝	Անվտանգության խորհուրդ Մարդասիրական ծրագրի վիճակը Իրաքում
Առաջարկող՝	Մալայզիա, Ռուսաստանի Գաշնություն

Անվտանգության խորհուրդը,

Վերհիշելով իր նախկին համապատասխան բանաձեռերը, մասնավորապես՝ թիվ 986 (1995), 1111 (1997), 1129 (1997), 1175 (1998), 1242 (1999), 1275 (1999),

Արտահայտելով իր անհանգստությունը Իրաքի հասարակության հատկապես ամենախոցելի խմբերում արագորեն աճող աղքատության եւ պարենային անապահովության կապակցությամբ,

Մտադրվելով բարելավել Իրաքում սոցիալական եւ մարդասիրական ծանր դրությունը,

Վերահաստատելով Իրաքում ազգային ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ քաղաքական անկախությունը պահպանելու իր պատրաստակամությունը,

Գործելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության գլուխ 7-ի շրջանակներում,

- Շեշտում է* Իրաքի ժողովրդի խիստ կարիքը մարդասիրական ծրագրի շարունակման խնդրում,
- Ընդգծում է* մարդասիրական ծրագրի

20. Էթնիկական կամ մշակութային խնդիրները
21. Գոյություն ունի՞ արդյոք փախստականների խնդիր
22. Քաղաքականապես կայուն է արդյոք այս երկիրը
23. Անդամակցությունը առևտրային կամ տնտեսական դաշինքների
24. Վճարային կամ առևտրային հաշվեկշիռ
25. Բանակի կառուցվածքը
26. Ռազմական ծախսեր (պաշտպանության ծախսերի տոկոսը ՀՆԱ²-ում)
27. Հիմնական զենքերը, ատոմային կարողությունները
28. Տնտեսական համակարգը
29. Հիմնական արտահանումը եւ ներմուծումը
30. Առևտրի հիմնական գործընկերները
31. Պետության արտաքին պարտքը
32. Արդյունաբերությունը
33. Բնական պաշարները
34. Էներգիայի աղբյուրները
35. Պատմական հակառակորդները
36. Նախկին եւ ներկա հակամարտությունները

¹ Միավորված ազգերի Չարգացման ծրագիր
² Համախառն ներքին արդյունք

6. Important URL addresses Ինտերնետային կարեւոր հասցեներ

UN Sites ՄԱԿ-ի վեբ կայքեր

The UN homepage
 ՄԱԿ-ի ինտերնետային կայքը
www.un.org

Peace and Security
 Խաղաղություն եւ անվտանգություն
www.un.org/peace
www.un.org/Depts/dpko

Human Rights
 Մարդու իրավունքներ
www.un.org/rights

International law
 Միջազգային իրավունք
www.un.org/law

Humanitarian Affairs
 Մարդասիրական ձեռնարկումներ
www.un.org/ha

Economic and Social Development
 Տնտեսական եւ սոցիալական զարգացում
www.un.org/esa

About the UN

ՄԱԿ-ի մասին

www.un.org/aboutun

UN News

ՄԱԿ-ի նորություններ

www.un.org/news

Documents

Փաստաթղթեր

www.un.org/docs

www.un.org/Depts/treaty

Databases

Տվյալների շտեմարաններ

www.un.org/databases

Member States

Անդամ երկրներ

www.un.org/members

Library

Գրադարան

www.un.org/Depts/dhl

Reform at the UN

Բարեփոխումները ՄԱԿ-ում

www.un.org/reform

Security Council

Անվտանգության խորհուրդ

www.un.org/Overview/Organs/sc.html

UN System

ՄԱԿ-ի համակարգը

www.unsystem.org

Search

Որոնում

www.un.org/search

Statistics

Վիճակագրություն

www.un.org/Depts/unsd/global.html

Model UN

ՄԱԿ-ի մոդել

www.un.org/pubs/cyberschoolbus/munda

www.unimun.org

web.odu.edu/al/mun/odumun

www.unausa.org/programs/modelun/htm

UNDPI Yerevan office website

UNDPI երեւանյան գրասենյակի

երկլեզու վեբ կայքը

www.undpi.am

UN Development Program Yerevan office website

ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի երեւանյան գրասենյակի վեբ կայքը

www.undp.am

Regional Information

Տարածաշրջանային տեղեկատվություն

Africa Policy

<http://www.africapolicy.org>

Council of Europe

<http://www.coe.int>

European Union

<http://www.europa.eu.int>

North Atlantic Treaty Organization

<http://hq.nato.int>

Organization of American States

<http://www.oas.org>

Organization of African Unity

<http://www.oau-oau.org>

Organization for Security and Co-operation in Europe

<http://www.osce.org>

Middle East Review and Information Project

<http://www.merip.org>

General

Ընդհանուր

Foreign Policy Association

<http://www.fpa.org>

Brookings Institution

<http://www.brook.edu>

Center for Strategic and International Studies

<http://www.csis.org>

Armenian Center of National and International Studies

<http://www.acnis.am>

Country information

Տեղեկություն երկրների մասին

Electronic Embassy

<http://www.embassy.org>

CIA World Factbook

<http://www.odci.gov/cia/publications/fact-book/index.html>

Encyclopedia Britannica

<http://www.eblast.com>

News

Նորություններ

«Ազգ»

<http://www.azg.am>

«Առավոտ»

<http://www.aravot.am>

«Արմենպրես»

<http://www.armenpress.am>

«Նոյյան տապան»

<http://noyan-tapan.am>

“Radio Liberty”

«Ազատություն» ռադիոկայան

<http://www.armenialiberty.org>

“PanArmenian Network News”

Համահայկական նորությունների ցանկ

<http://www.panarmenian.net>

“Ãî ëî ñ Æðì áí èè”

<http://golos.arminco.com>

“Í î âî ñðè@mail.ru”

<http://news.mail.ru>
“Groong / Armenian News Network”
<http://www.groong.usc.edu>
“Associated Press”
<http://wire.ap.org>
“CNN”
<http://www.cnn.com>
“The Economist”
<http://www.economist.com>
“The New York Times”
<http://www.nytimes.com>
“World Policy Journal”
<http://www.worldpolicy.org>

7. Օգտագործված գրականության ցանկը

1. Ի՞նչ կուզենայի իմանալ Միացյալ Ազգերի մասին / ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն. - Երևան, 1998:
2. Համառոտ ՄԱԿ-ի մասին / ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն, – Երևան, 1999:
3. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948-1998 / ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն. - Երևան, 1998:
4. Միավորված ազգերի կազմակերպությունը Չեզ համար / ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն. - Երևան, 2001:
5. A Global Agenda 2000-2001 Edition. Issues before the 55th General Assembly of the United Nations/United Nations Association of the United States. - New York: UNA/USA and UN, 2000.
6. A Guide to Delegate Preparation 1999-2000. Model United Nations/United Nations Association of Unites States. - New York: UNA/USA and UN, 1999.
7. Basic Facts about the United Nations / United Nations Department of Public Information. - New York: UN, 2000.
8. Briefing Papers for Student. “We the Peoples” The Role of the United Nations in the 21st

century. Millennium Report / United Nations Department of Public Information. – New York: UN, 2001.

9. Human Development Report 2001: Making New Technologies Work for Human Development / United Nations Development Program. – New York: UNDP, 2001.
10. Model UN for Everyone/United Nations Association of United States. - New York: UNA/USA and UN, 2000.
11. Peacekeeping in Africa: Capabilities and Culpabilities / Berman Eric, Sams Katie. - Geneva: United Nations Institute for Disarmament Research, 2000.

Ինտերնետային աղբյուրներ

1. International Studies Club
[http://www.osu.edu/students/isc/
model_un_rop.htm](http://www.osu.edu/students/isc/model_un_rop.htm)
2. Model UN and UN Research
<http://sshl.ucsd.edu/guides/ModelUN.html>
3. Rules of Procedure and guide to resolution writing
<http://sites.netscape.net/cwpostcrew/rules>
4. UNIMUN Conference Handbook- Resolutions
http://www.unimun.org/unimun_hb_3.html